

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ

Ի Շ Խ Ե Մ Ի Շ Խ Ա Ն

Իշխ-եմ, իշխ-եցի, «herrchen», իշխ-ան «Fürst». իշխ-ան-
ական, իշխ-ան-արար: Բառս հին է և ստեպ գործածելի:

= զնդ. ¹⁾ xsi, սկր ^vksi նպ. saistan (> ^vsah, Herrscher)
«herrschen».

s և x բաղաձայնների տեղափոխումն փոխառեալ բառե-
րում հայերէնի ծայնական օրէնքներին միանգամայն համապա-
տասխան է. հմմտ. նպ. basxidan=հայ. ըաշխել, հարշ. xsaթր
=հայ աշխարհ: xs արմատական բաղաձայններին հայերէնում
նախընթացիկ ի ծայնականը մեկնելու է նորանով, որ փոխա-
ռեալ բառերում արմատական ծայնականին համահնչիւն ծայնա-
կան բառի սկզբին կցւում է. հմմտ. ա-շակերտ=նպ. sakerd,
ա-շխարհ (փոխան. խշահր)=հարշ. xsaթր, ա-շխետ=xsaita
և այլն: Այսու համաձայն զնդ. xsi-ից կարող էր հայերէնում
միայն ^visx (> ^vixs), ոչ թէ ^vasx կամ ^vesx սերիլ:

Իշխ-ան բառի—an մասնիկը անկասկած պարսից ծագում
ունի:

¹⁾ Կրճատումներ. զնդ.—զենդերէն, սկր.—սասնկրիտերէն,
նպ.—նոր պարսկերէն, հարշ.—հին արշակուններէն:

Ն Ա Խ Ա Ր Ա Ր

Նախ-արար, նախ-արարութիւն, նախ-արարական: Հին և
ստեպ գործածելի:

Թէ՛ բառիս բուն իմաստի և թէ՛ նորա ստուգաբանու-
թեան մեկնութեանց փորձերը մինչև այժմ բաւարար չեն հան-

դիսացել: Խօնդիրս լուծելու համար կարևոր է՝ ըստ իս՝ դիմել երկրիս պատմութեան օգնութեանը: Նախարար բառը հայաստանի քաղաքական կեանքի հնազոյն գաղափարներից մէկն է. այլ տեղում մատնացոյց եմ տրել, որ նախարարները՝ ինչպէս ապացուցանում է նոցա կատարած մեծ դերը երկրիս պատմութեան ամբողջ ընթացքում, հայաստանի նախադոյն տէրերը, բազմաթիւ և բազմաբարբառ ցեղերի բնիկ պետերն են հանդիսացել, որոնց առհմանունները մասամբ ուրարտեան և ասորեստանի բւեռագիր արձանադրութիւններում ենք կարդում (տ. իմ «Մի կարծիք հայ նախարարութեանց ծագման մասին», Պարիս 1901): Իշխելով իրենց տոհմական դաւառների վերայ նախարարները ստիպուած էին անընդհատ կռիւ մղել պարսից արշակունիների դէմ, որոնք՝ տիրելով հայաստանին՝ եղնում էին զէնքի զօրութեամբ վերացնել երկրի բնիկ տէրերի անկախութիւնը: Այս տոհմական հողերը կոչւում էին արար, ինչպէս Մ. Խորենացին երկիցս վկայում է. պարսից արքայ Շապուհ արձակում է հայ նախարարներին հետեւեալ պատուէրով. «Անդ դարձեալ ձեր իւրաքանչիւր արարս՝ իշխեցէք, որպէս և ցայժմ» (Գիրք Գ. 43): Նոյն զլխում աւանդում է մեր պատմագիրը, որ նախարարները՝ Սրշակ արքայի հետ գաղթելով երկրի արեւմտեան մասը, թողին իրենց արար-ները, դիւղերը և դաստակերտերը՝ զնացին զհետ նորա (Սրշակայ) հանդերձ կանամբք և որդովք և նախարարութիւնք՝ որ ի բաժնի Շապուհոյ, թողլով զիւրաքանչիւր արարս և զգեւղս և զգոստակերտս:» Այստեղ առաջին տեղում լիւրում է արար իբրև domain, որին հետևում են դիւղեր և ապա դաստակերտեր:

Նախ—(նախ-նի, նախ-նիք, նախ-կին) կամ ՆԱՎ—(նահապետ) բառի իմաստը իբրև «առաջին», princeps պարզ է: Այսպիսով նախարար պետք է նշանակէր (տոհմական հողի տէր, Domainenfüst): Իշխան (տէր, պետ) հակառակն աւելի քաղաքական իմաստ ունի. առաջին բառը հայերէն է, երկրորդը՝ պարսկերէն: